

Նաիրա Ժ. Մկրտչյան
Փիլ. գիյ. թեկնածու

ՄԵՐ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ

Եվ հաստատությունների երկարակեցության
հիմնախնդրի շուրջ*

Բանալի բառեր – ներպետական կյանք, ներհասարակա-
կան կյանք, հիմնանորոգում, փոփոխություն, հաստատու-
թյուններ, մշտադիմացկունություն, հասարակական կարգ,
խզումներ:

Մուտք

Մի առիթով ֆրանսիացի փիլիսոփա Ա. Բադյուն նկատել է, որ «... ի-
րադարձությունը ... ստիպում է մեզ կեցության **նոր** եղանակ ընտրել»¹:
Սակայն, կեցության նոր եղանակ ընտրելու անհրաժեշտությունից ու այն
կյանքի կոչելուց զատ, նույն իրադարձությունը պիտի որ քողազերծի իրո-
ղություններ, հանգամանքներ, կողմեր, որոնք մինչ այդ տեսանելի չէին
կամ գուցե չկային էլ²: Եվ դրանք կարծես պակաս ազդեցիկ չեն կեցության
նոր եղանակ ընտրելիս: Այլ հարց է՝ **իրադարձության մասնակիցները,
ակնատեսները, ապրողներն ու վերապրողները պատրա՞ստ են արդ-
յոք ոչ միայն բացահայտելու այդ իրողությունները, հանգամանքները
կամ կողմերը, այլև հաշվի նստելու դրանց հետ ու համարժեք քայլեր
ձեռնարկելու:**

Թագավարակը, բայց հատկապես 44-օրյա պատերազմը և դրանից
հետո Հայաստանում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձություններն
առանձնահատուկ կերպով սրել են մեր ներպետական կյանքի հիմնանո-
րոգման ու բարենորոգման, այսինքն՝ հենց կեցության եղանակի հարցը:
Որպես աղետ ըմբռնվող վերոհիշյալ երևույթը եկավ փաստելու, որ հայա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.03.2022:
1 **Badou A.**, Ethics: An Essay on the Understanding of Evil, London/New York, 2001, p. 41.
2 Ա. Բադյուն համոզված է, որ իրադարձությունն իր հետ բերում է ««ինչ-որ այլ բան», քան իրավիճակն է, կարծիք-
ները, հաստատված գիտելիքները» (տե՛ս նույն տեղում, էջ 67): Այլ կերպ ասած, ըստ ֆրանսիացի փիլիսոփայի,
այն «տակնուվրա է անում» գոյություն ունեցող պատկերացումներն ու իրավիճակի վերաբերյալ մոտեցումները:

Վլէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 1 (77), հունվար-մարտ, 2022

տանյան հասարակական-պետական հաստատություններն ի գորու չեն դիմակայելու 21-րդ դարի զարգացումներից և դրանց համահունչ գործող կառույցներից ու, լայն իմաստով, **տեխնոլոգիաներից** բխող մարտահրավերներին: Ուստի պատահական չէ, որ հայաստանյան ու հայկական տիրույթներում սկսեցին հնչել արմատական փոփոխություններ իրականացնելու կոչեր, և մինչ այժմ թվում է, թե ամեն կողմից շարունակում է հնչել բազմապիսի մարտահրավերների առկայության ու դրանց դիմագրավելու անհրաժեշտության գաղափարը: Եվ ահա դրանով է պայմանավորված այն, որ փոփոխությունների կյանքի կոչումը, որոնք այդ հիմնանորոգման ու բարենորոգման ուղի ու ծուծն են, համարվում է ստեղծված իրավիճակը հաղթահարելու միակ ճշմարիտ ուղին³: Հակառակ դեպքում Հայաստանը, նրա հետ նաև Արցախը հայտնվելու են գոյութենական մի այնպիսի վտանգի առջև, որը հարցականի տակ է դնելու նրանց հայկականությունը, ինչպես նաև հայոց պետականության գոյությունը:

Ահա այս համատեքստում է, որ պիտի հարց տալ՝ ինչ է ենթադրում ներհասարակական-ներպետական կյանքի հիմնանորոգումն ու բարենորոգումը, ինչպես է խնդիրը մեզանում ի հայտ եկել գոնե վերջին տասնամյակներում, ինչ այլ հարցերի, կողմերի ու ըմբռումների է այն առնչվում, որոնց մինչ այժմ քիչ ենք ուշադրություն դարձրել: Ուսումնասիրության առումով սրանք կարևոր հարցեր են, որոնց նշանակությունը ոչ միայն և ոչ այնքան տեսական-գիտական է, որքան հենց գործնական: Սակայն դրանց քննությունը տեղին է սկսել հենց տեսական մարզից, որից հետո միայն հնարավոր կլինի շոշափել հարցի առավել կոնկրետ կողմերը:

1. Մտածել փոփոխությունը

Ամենաընդհանուր իմաստով փոփոխության կամ փոփոխությունների մասին առաջինը խորհել են փիլիսոփաները: Սա միանգամայն օրինաչափ է՝ հաշվի առնելով այն, թե երբ, ինչու և ինչ պայմաններում են ծնունդ առել աշխարհի ռացիոնալ յուրացման ձևերը⁴: Գործունակություն կամ, այլ կերպ ասած, ակտիվություն ենթադրող փոփոխության մասին փիլիսոփայական մտքի հոլովույթում խորհելն առանձնահատուկ մտավորական ճիգ է պահանջել: Դրա վերաբերյալ առաջադրվող հարցադրումներն իրենց հետ քննության ասպարեզ են բերել նաև գոյաբանական հիմնահարցերի լայն շրջանակ, որոնք մի տևական ընթացք, ըստ էության, լռելյայն ներա-

3 Կա՞ արդյոք այս դեպքում խոսքի ու գործի միջև համապատասխանություն՝ բոլորովին այլ հարց է, ընդ որում, դրա քաղաքական նշանակությունը վճռորոշ է:

4 Պիտությունն ու փիլիսոփայությունը հավասարապես ռացիոնալ ըմբռնման դրսևորումներն են, բայց մի տևական ընթացք՝ մինչև 16-17-րդ դարերը. փիլիսոփայությունն է հիմնականում ստանձնել աշխարհի ընդհանուր տեսանկյունից բացատրելու գործառույթը:

նել են բոլոր գոյաձևերը՝ ֆիզիկական-զգայելիից մինչև իդեալական-անզգայելին⁵։ Ընդ որում, դրանք վերաբերել են ժառանգորդման ու խզման բարդ հարաբերություններին, այսինքն՝ նպատակ են ունեցել պարզելու, թե փոփոխությունն ապրող իրի, իրողության նախկին ու ներկա վիճակներն ինչպես են միմյանց առնչվում։ **Դրանց միջև անկամրջելի անջրպետ կա՞, թե՞, այնուամենայնիվ, նախկին վիճակից ներկա վիճակին հատկանիշներ, որակներ, հարաբերություններ են փոխանցվում, և ինչպե՞ս կարելի է այդ ամենն ըմբռնել։**

Հին հույն փիլիսոփա Հերակլիտեսից մինչև Հեգել և այնուհետև փոփոխության վերաբերյալ տեսակետները երբեմն տրամագծորեն հակադրվում էին։ Նախ՝ որոշ դեպքերում փոփոխությունը եղել է թվացյալ ու իրական, զգայական ու գերզգայական աշխարհների սահմանազատման ելակետը։ Հայտնի է, որ հատկապես Էլեական դպրոցը ներկայացնող Պարմենիդեսի, ապա նաև Պլատոնի կարծիքով՝ փոփոխությունը բնորոշ է զգայական, թվացյալ աշխարհին, իսկ իսկական, գերզգայական գոյությունը գուրկ է նման հատկանիշից⁶։ Եվ միայն 18-19-րդ դարերում է փոփոխության մասին փիլիսոփայական հայացքում իրապես տեղի ունենում մեծ շրջադարձ, որի հետևանքով այն դառնում է ընդհանրապես գոյության էական հատկանիշը։ Այլ կերպ ասած՝ տիրապետող է դառնում «անհնար է գոյություն ունենալ առանց փոփոխության» համոզմունքը, և Հեգելն այդ շրջադարձի ականավոր ներկայացուցիչներից էր, եթե ոչ՝ ամենաականավորը⁷։

Իհարկե, փոփոխության վերաբերյալ այս հակիրճ ու ընդհանուր դատողությունները պարզաբանման ու կոնկրետացման կարիք ունեն։ Դա հնարավոր կլինի իրականացնել բուն ներհասարակական-ներպետական կյանքի քննության դեպքում։ Բանն այն է, որ, փիլիսոփայության ու գիտության պատմությանը զուգահեռ փորձական հենքի վրա արդի գիտությունների սկզբնավորման պահից սկսած, տարբեր գիտություններում ու գիտակարգերում փոփոխության հարցն աստիճանաբար, այսպես ասած, «յուրացվել», «տեղայնացվել է»։ Այսինքն՝ այն ներառվել է ամենատարբեր դրսևորումներ ունեցող կոնկրետ գոյաձևի վերաբերյալ գիտական քննարկումներում։

Այսպիսով՝ ինչ-որ պահից սկսած՝ մտածել փոփոխությունը նշանակել է մտածել կոնկրետ գոյաձևում փոփոխությունը, ինչն ամենևին

5 Դրանցից է, օրինակ, այն հարցը, թե փոփոխության աղբյուրը փոփոխվողի ներսում է, թե՞ դրսում, ինչի հետևանքով անխտապիտիորեն պիտի իմաստավորել գոյաձևերի բնույթի հարցը։ Կամ ոչ պակաս կարևոր հարց է, թե փոփոխությունները հանգեցնո՞ւմ են նախկինում գոյություն չունեցող, որակապես նոր ձևերի առաջացմանը, թե՞ դրանք ապահովում են արդեն գոյություն ունեցող մի ձևից անցումը մյուսին և այլն։

6 Տես **Парменид**, Элейская школа, «Антология мировой философии», т. 1, ч. 1, М., 1969, էջ 293-296, **Платон**, Тимей, Избранные диалоги, М., 2002, էջ 161-248, **Платон**, Государство, Избранное, М., 2006, էջ 27-384։

7 Հետաքրքրական է, որ փոփոխության վերաբերյալ պատկերացումներում այս շրջադարձը համընկնում է արդիականության նախագծի սկզբնավորման ու արդիականացման կարևորման հետ։

չի ենթադրել փոփոխության վերաբերյալ ընդհանուր-փիլիսոփայական ըմբռնումներից կամ մտորումներից հրաժարում: Այլ ավելի շուտ եղած ըմբռնումները փոխվել, ձշգրտվել են կոնկրետ-գիտական ուսումնասիրությունների միջոցով, կամ էլ, ինչպես սիներգետիկայի դեպքում, միջգիտակարգային ուսումնասիրությունների հետևանքով ձևակերպված ըմբռնումը ձեռք է բերել համագիտական, փիլիսոփայական նշանակություն: Ներհասարակական-ներպետական կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման, այսինքն՝ փոփոխության հարցը քննելու համար անհրաժեշտ է նախ լույս սփռել այս գոյաձևի որոշ կողմերի վրա:

2. Ներհասարակական-ներպետական կյանքի կազմակերպումն ու ձգնաժամի փորձառությունը

Ներհասարակական-ներպետական կյանքի մասին մտածելիս անխուսափելի է հասարակական-պետական կարգի հիմնահարցի արծարծումը. առաջինի հիմնակմախքը հենց վերջինն է, քանի որ կազմակերպվածության որոշակի ձև է հաղորդում նրան: Սոցիալ-քաղաքական մտքի պատմության մեջ որպես քննության ու արժևորման առարկա՝ հասարակական-պետական կարգը, դրա հորինվածքն առանձնահատուկ կարգավիճակ ունեն: Եվ սա լավագույնս վկայում են այդ մտքի ականավոր ներկայացուցիչները, որոնց համար այն մարդկային համակեցության կազմակերպման բարձրագույն ձևն է⁸, իսկ նրա հորինվածքը՝ միմյանց հետ որոշակի կերպով փոխկապակցված ու փոխգործակցող հաստատություններն ու կառուցակարգերը⁹: Այսպես դիտարկել խնդրո առարկան նշանակում է որդեգրել գլխավորապես հաստատութենական (institutionalist) մոտեցում, որի առանցքում մարդկային համակեցության որոշակի ձևում գործող կանոններն ու դրանց հենքի վրա ձևավորված միավորներն են¹⁰: Ի հայտ եկող մարտահրավերներին, այսինքն՝ մարդկայինի ու մարդկային համակեցության գոյությունը հարցականի տակ դնող իրողություններին դեմ հանդիման դրանք են հաղորդում որոշակի կայունություն ու դիմակայունություն (resilience):

Իհարկե, գործնական հողի վրա միանգամայն վճռորոշ է, որ կոնկրետ մարդկանց՝ անհատների ձեռնարկած գործողությունները (իրականում նաև

8 Ств Платон, Государство, Избранное, էջ 27-384, Аристотель, Политика, Сочинения в 4 томах, т. 4, М., 1984, էջ 376-379:

9 Ств Rawls J., A Theory of Justice, Cambridge/London, 2005, էջ 7-9:

10 Սոցիալ-քաղաքական մտքում հաստատութենական մոտեցման բազմաթիվ ներկայացուցիչներ կան, որոնցից էլ ամերիկացի փիլիսոփա Ջ. Ռոլսը: Բայց քննարկվող հարցերի ու դրանց դիտանկյան առումով տեղին է նաև իդեալ ամերիկացի մտածողներ Գ. Նորթին, Ջ. Ուոլիսին և Բ. Ուեյնգասթին, որոնք շեշտը դնում են հատկապես հաստատությունների մշտադիմացկունության վրա (տես North D., Wallis J., Weingast B., Violence and Social Orders: A Conceptual Framework for Interpreting Recorded Human History, Cambridge, 2009, էջ 15):

նրանց համոզմունքները) հիմնականում համապատասխան են ու համահունչ լինեն այդ կանոններին: Եվ այս՝ կանոնների ու ձեռնարկվող գործողությունների միջև ծավալվող փոխհարաբերություններում է, որ առաջանում են մի կողմից՝ հաստատությունների ժառանգորդման ու դրանց փոփոխության, մյուս կողմից՝ դրանց հետ խզման հնարավորություններ: Սակայն հարկադրված լինելով անտեսել հարցի այս կողմը, քանի որ հակառակ պարագայում ներկա քննությունն այլ ուղղությամբ կարող է ընթանալ անհրաժեշտ է ուշադրությունը շարունակել բևեռել հենց հաստատությունների և հատկապես դրանց երկարակեցության հատկանիշի վրա:

Ինչպես մասնավոր-գիտական ուսումնասիրություններն են վկայում, մարդկային համակեցության և մասնավորապես հասարակական-պետական կարգի կայունության¹¹ ու դիմակայունության գլխավոր գրավականներից մեկը հենց հաստատությունների երկարակեցությունն է՝ պայմանով, որ ժամանակի ընթացքում այդ հաստատություններն իրենք կփոխվեն, այսինքն՝ որոշակիորեն կվերանայվեն խնդրո առարկա համակեցության մեջ գործող կանոններն ու դրանց գոյության պայմանները: Այս ամենը, ինչպես արդեն նշվել է, ենթադրում է մի կողմից՝ ժառանգելու, պահպանելու, մյուս կողմից՝ խզելու բարդ ու նրբին գործընթացներ: Ավելորդ չէ նշել, որ ցանկացած նմանատիպ փոփոխություն հանգեցնելու է նաև հաստատությունների ու կառուցակարգերի փոխկապակցման և փոխգործակցման կերպի, այսինքն՝ հասարակական-պետական կարգի ու նրա հորինվածքի փոփոխությանը¹²: Ուստի ներհասարակական-ներպետական կյանքի սկզբունքներ, կանոններ (նաև գործողություններ ու համոզմունքներ) շոշափող հիմնանորոգման ու բարենորոգման¹³ հիմնահարցը ասպարեզ է բերում բազմաբարդ ու համալիր խնդիրներ: Այս համատեքստում ավելորդ չէ պնդել, որ ներհասարակական-ներպետական կյանքում փոփոխության մասին մտածելը, առավել ևս այն իրագործելը լուրջ հանձնառություն են:

Քննության տրամաբանական թելը պահելու համար տեղին կլիներ այս հատվածում պարզորոշել, թե ներհասարակական-ներպետական կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման կարիքն իր խորքում ինչի մասին է ի վերջո վկայում: Ըստ էության, նման կարիքի ու դրա բավարարմանը միաված ձեռնարկների հիմնախորքում ճգնաժամի որոշակի փորձառությունն է, քանի որ հիմնանորոգման ու բարենորոգման ձգտումն ու

11 Իրականում խոսքը դիմամիկ կայունության մասին է, ոչ թե ստատիկ:

12 Ամերիկացի մտածողներ Գ. Նորթի, Ջ. Ուոլիսի և Բ. Ուեյնգասթի նշված աշխատությունն ամբողջովին նվիրված է հենց հաստատությունների մշտադիմացկունությանը, հասարակական կարգերի տիպերին, դրանց փոփոխությանը և այլն:

13 Հետաքրքրական է, որ «բարենորոգել», «բարեփոխել» բառերի առաջին բաղադրիչը «բարք» բառն է, որը նշանակում է «կենցաղ, սովորույթ, ապրելակերպ, խառնվածք, բնավորություն, կարգ, կանոն, եղանակ, վարք» (տես **Մայիսանանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, Եր., 1944, էջ 374, **Կոստան Ա. Վոր.**, Բառգիրք հայերեն լեզուի, Պէյրուս, 1998, էջ 62):

անհրաժեշտությունն ի հայտ են գալիս, ըստ էության, համանման հանգամանքներում: Ընդ որում, ներհասարակական-ներպետական կյանքի առնչությամբ այսօրինակ փորձառությունն ունի ինչպես օբյեկտիվ-համակարգային չափում, երբ հասարակական-պետական կարգը, նրա հորինվածքն անզոր են լուծելու ծագող խնդիրները, ասել է թե՛ գործող հաստատություններն ու կառուցակարգերն ի վիճակի չեն առերեսվելու առաջացող մարտահրավերներին, այնպես էլ սուբյեկտիվ-անձնային չափում, երբ կարգի մասնակիցները տեղի ունեցողը, ստեղծված իրավիճակը փորձրկալում են որպես իրենց ինքնությունը հարցականի տակ դնող գոյաբանական վտանգ¹⁴:

Ինչո՞ւ է ներկա քննության համար կարևոր մանրամասնել սոցիալ-քաղաքական մտքի տեսանկյունից դասագրքային թվացող այս ճշմարտությունները: Պատճառը հայաստանյան ու ընդհանրապես հայկական շրջանակների մտահոգությունների առանցքում ընկած հայկականության, դրա հետ ավանդաբար փոխկապակցված հայկական պետության ու պետականության ճակատագրի հարցն է: Եթե դրանց լրջորեն վտանգված լինելու վերաբերյալ այստեղ ու հիմա հնչող մտահոգություններին պիտի համարժեք խնդիրներ ու լուծումներ ձևակերպվեն, ապա անխուսափելի է հաստատութենական մոտեցման կիրառությունը: Վերջինս ի ցույց է դնում, տեսանելի դարձնում հիմնարար խնդիրներ՝ հայաստանյան, գուցե առավել լայն իմաստով՝ հայկական կառույցների ու հաստատությունների դիմակայությունը¹⁵: Ուրեմն միանգամայն հասկանալի է նաև, թե ինչու են աղետներն ի հայտ գալիս, հանգեցնում դրանց կորստին կամ լավագույն դեպքում թուլացնում դրանք, և ինչու է հայկական պետականությունների պատմությունը ներկայանում որպես երկարատև փլուզումների ու կարճատև վերականգնումների անփոփոխ ակոս: Ահա այս համատեքստում անհրաժեշտ է ուրվագծել հայոց մեջ հիմնանորոգման ու բարենորոգման փորձառությունը, որն այս հարցերին որոշակի առարկայականություն կարող է հաղորդել:

14 Պերմանացի փիլիսոփա, սոցիոլոգ Յ. Հաբերմասն այս մասին գրում է. «Համակարգային մոտեցման համաձայն՝ ճգնաժամերն ի հայտ են գալիս, երբ սոցիալական համակարգի կառուցվածքը խնդիրների լուծման համար ավելի քիչ հնարավորություններ է տալիս, քան անհրաժեշտ է համակարգի շարունակական գոյության համար: ... Միայն այն դեպքում կարող ենք խոսել ճգնաժամերի մասին, երբ հասարակության անդամները կառուցվածքային փոփոխությունները փորձառում են որպես շարունակական գոյության համար վտանգավոր և զգում են, որ իրենց սոցիալական ինքնությունը վտանգված է» (Habermas J., Legitimation Crisis, Cambridge, 2004, p. 2-3):

15 Բացի այդ՝ մեծ դիտանկյունից խնդիրների բնությունն ու արժարժույթը հնարավոր են դարձնում շրջանցել սուբյեկտիվ, հայաստանյան համատեքստին բնորոշ անձնավորված չափումները և գործ ունենալ օբյեկտիվ-վերանձնային չափումների հետ:

3. Ուրվագծելով հիմնանորոգման փորձառությունը

Պատմության հանդեպ ուրվագծային հայացքն անգամ բավական է պնդելու, որ հայոց մեջ ներքին կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման մի շարք փորձեր են ձեռնարկվել, հետևաբար նաև նոր սկզբունքների, նոր(ա-րարական) հաստատությունների ու կառուցակարգերի հենքի վրա ներհասարակական (իսկ գուցե ճիշտ է ասել՝ ներհամայնքային) կյանքի կազմակերպման փորձեր: Ավելին՝ գիտական ու գործնական առումներով անչափ հետաքրքիր հարց կարող է լինել, թե հայոց մեջ ներքին կյանքը հիմնանորոգելու ինչպիսի պրակտիկաներ (ինչու չէ, նաև հիշողություններ) են ձևավորվել: Սա մի հարց է, որ կարող է պատասխան գտնել միայն միջգիտակարգային ուսումնասիրությունների միջոցով՝ ուղեկցվելով քննադատականության նշանակալի չափաբաժնով: Սակայն առանց այս հարցին պատասխանելու՝ դժվար կլինի քիչ թե շատ ըմբռնել ոչ միայն փոփոխության, ասել է թե՛ ներքին կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման հարցը հայոց մեջ, այլև հայկականության ու հայկական պետականության ճակատագրի հարցը:

Հայոց մեջ ներքին կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման փորձերի շարքում անշուշտ կընդգրկվի Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունումը, որը ժամանակին համահունչ՝ կրոնական հիմնանորոգման ճանապարհով քաղաքական հիմնանորոգման փորձ էր: Սոցիալ-պատմական առումով, իհարկե, վճռորոշ էր 16-19-րդ դարերն ընկած ժամանակաշրջանը, երբ ««գաղութի» և «սփյուռքի» սահմանագծի միջև»¹⁶ ապրող հայ ժողովուրդը փորձում էր հետևել եվրոպական արդիականության միտումներին: Անկասկած, այդ փորձերից է նաև 20-րդ դարում Հայոց ցեղասպանությունից հետո, մոտ մեկ դար Ռուսական կայսրության տիրապետության ներքո գտնված ու անկախության կարճ շրջան ապրած Արևելյան Հայաստանի խորհրդայնացումը: Ընդ որում, խորհրդային նախագիծը «արդեն իսկ 1920-ականների վերջից աստիճանաբար սկսեց տարանջատել իրեն համաշխարհային արդի մշակութային շարժումից՝ որպես քաղաքական հակադրություն «արևմտյան արդիականության» մոդելին»¹⁷, այսինքն՝ փորձեց արդիականանալ, հիմնանորոգվել, այսպես կոչված, խորհրդային մոդելով¹⁸:

Ներհասարակական-ներպետական կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման հաջորդ փորձը, որը մեր օրերին ժամանակային առումով առավել

16 **Զեքիան Պ. Լ.**, Հայկական ուղին դեպի արդիականություն: Հայ Ինքնությունն ավանդույթի և նորույթի, հատուկի և ընդհանրականի միջև, <http://arjps.org/cover/arm/The%20Armenian%20Way%20to%20Modernity.pdf> (մուտք 03.01.2022), էջ 21:

17 **Արևշատյան Ռ.**, Վերընթերցելով երկփեղկված պատմությունը..., **Տեր-Մինասյան Թ.**, Ճարտարապետությունը Գուլագում: Նորիսկ, խորհրդային բևեռային քաղաքի կովկասյան պատմություն, Եր., 2019, էջ 7:

18 Արվեստագետ և արվեստի քննադատ Ռ. Արևշատյանը նկատում է, որ «խորհրդային մարդը, հայտնված լինելով հռչակված արդի մշակույթի պրոգրեսիվ սկզբունքների մուրձի և կայսերական տոտալիտար պահպանողական իրականության գնդանի միջև, գնալով ավելի ու ավելի էր խորանում մեծ մշակութային հակասության հետևանքով առաջացած երկատվածության մեջ...» (նույն տեղում, էջ 6):

մոտն է, կարելի է ասել՝ ոչ վաղ անցյալն ու նաև ներկան, ձեռնարկվել է ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Եվ ահա այս համատեքստում պիտի նկատել, որ նորանկախ Հայաստանի պատմության ընթացքում ներհասարակական-ներպետական կյանքին առնչվող հարցերի շարքում թերևս ոչինչ այնքան հանրորեն չի շրջանառվել ու քննարկվել, որքան փոփոխությունների հարցը: Ներհասարակական-ներպետական կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման հրամայականի մասին, որը, ինչպես նշվել է, սկզբունքորեն ենթադրում է փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն ու նպատակադրում, խոսել են ամենատարբեր դերակատարներ՝ պետական ու քաղաքական, հանրային ու մտավորական գործիչներ: Ամենատարբեր առիթներով¹⁹ հենց նրանք էլ ձգտել են պարբերաբար վերանորոգելու փոփոխությունների խնդրի հանդեպ հանրային ուշադրությունը՝ անկախ այն հանգամանքից, թե գործնականում իշխանության ձգտող ուժերը կամ հասարակական լայն շերտերը որքանով են իսկապես պատրաստ եղել այդ փոփոխություններին: Բնականորեն պետական-քաղաքական իշխանությունը դարձել է այն ատյանը, որից ակնկալել են ներհասարակական կյանքի հիմնանորոգման ու բարենորոգման նպատակով փոփոխությունների նախաձեռնում և դրանց ի կատար ածում: Եվ այս առումով խորհրդային անցյալը հետխորհրդային՝ նորանկախության փուլին կարծես փոխանցել է պետական-քաղաքական քաղաքիչի վճռական նշանակության հանդեպ որոշակի հանրային զգայունություն²⁰: Ուստի մի կողմից այս հարցում հետևողականորեն վերարտադրվել է դարձյալ պետական-քաղաքական բաղադրիչի վճռական նշանակության հանրային ըմբռնումը, մյուս կողմից հանրային-քաղաքական խոսույթի օրակարգում իր կենտրոնական ու կայուն տեղն է պահպանել փոփոխությունների հարցը: Եվ ուշագրավ կերպով, իսկ գուցե միանգամայն օրինաչափորեն, Հայաստանի անկախացումն ու ներհասարակական կյանքում փոփոխություններ իրականացնելու հրամայականը ներհյուսվել են միմյանց և դարձել ինչ-որ առումով փոխապայմանավորող, փոխզարկերակող իրողություններ:

Ակնհայտ է, որ այլ կերպ լինել չէր կարող: Իրավաքաղաքական կարգավիճակի փոփոխությունը, տվյալ դեպքում՝ ԽՍՀՄ-ից Հայաստանի անկախացումն ու ԽՍՀՄ փլուզումը, չէր կարող չառաջացնել ներհասարակական կյանքում հիմնարար փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն²¹: Ազգային պետության ձևաչափի սահմաններում հայաստանյան համակեցության կազմակերպումը պետք է որ ենթադրեր նոր սկզբունքներ, հաստատույթ-

19 Փոփոխությունների հարցի քննարկումն անհամեմատելիորեն ակտիվանում է հատկապես համապետական ընտրությունների ժամանակ:

20 Ուշագրավ է, որ խորհրդային գաղափարախոսության հիմքում ընկած մարքսիզմն առաջնահերթում էր հասարակության պատվանդանը՝ տնտեսական կյանքը, որից ածանցվում էր վերնաշենքի՝ պետական-քաղաքական բաղադրիչի բնույթը:

21 Այս մասին մանրամասն տես «Անկախությունը և ազատական բարեփոխումները», Մաս 1, խմբ.: **Լիզա Ճաղարյան, Սեդա Մեսրոպյան**, Եր., 2020, «Անկախությունը և ազատական բարեփոխումները», Մաս 2, խմբ.: **Լիզա Ճաղարյան, Սեդա Մեսրոպյան**, Եր., 2021:

յուններ, կառուցակարգեր ընդունելու պատրաստակամություն, ուրեմն փոփոխությունների հանդեպ նշանակալի բացություն: Միաժամանակ իր կենսունակությունը կորցրած խորհրդային համակարգի փլուզումն արդեն իսկ պարտադրում էր ներհասարակական կյանքի կազմակերպման հենքերի արմատական վերանայում: Ուրեմն կարելի է ասել, որ այս իրադարձությունը՝ ԽՍՀՄ-ից անկախացումն ու ԽՍՀՄ փլուզումը, հենց իր **պատմականության** շնորհիվ կանխավ ենթադրում էր, որ խնդրո առարկա հասարակությունը վաղ թե ուշ առերեսվելու է սեփական ներքին կյանքը կազմակերպող սկզբունքների, հաստատությունների, կառուցակարգերի ձշտորոշման մարտահրավերին:

Պատմական փորձառությունը վկայում է, որ այս հարցում ցանկացած հապաղում կամ առկախում անխուսափելիորեն հարուցում է նորանոր խնդիրներ, արդի սոցիալական գիտություններին «հոգեհարազատ» եզրաբանությամբ՝ ռիսկեր կամ «վճարվելիք» սոցիալական գին²²: Ուրեմն անհիմն չի լինի պնդել, որ վերջին տասնամյակների հայաստանյան, իսկ գուցե նաև առավել լայն՝ հայկական իրականության համար փոփոխության՝ հիմնանորոգման ու բարենորոգման հարցը կարող է համարվել կենսական, նույնիսկ հրատապ խնդիր²³:

Ինչ վերաբերում է հետխորհրդային շրջանի Հայաստանում փոփոխությունների վերաբերյալ քննարկումներին, ապա, որպես կանոն, դրանք ներկայացվել են որպես համակարգային բարեփոխումներ, և, անկախ դրանց հաջողվածության կամ ավարտին հասցված լինելու աստիճանից, այնուամենայնիվ ձեռնարկվել են որոշակի քայլեր²⁴: Միաժամանակ համակարգային բարեփոխումների նախաձեռնման ու իրականացման հարցում նշանակալի դերակատարություն են ունեցել նաև արտաքին ազդակները²⁵: Եվ քանի որ հիմնանորոգման ու բարենորոգման հենց այս փորձառությունն է առավել կենդանի, անմիջականորեն ապրված, ուստի հենց դրա հաստատութենական որոշ կողմերին էլ տեղին կլիներ հաջորդիվ փոքր-ինչ անդրադառնալ:

22 20-րդ դարի 70-ական թվականների ԽՍՀՄ պատմությունը լավագույնս վկայում է, որ փոփոխություններ իրականացնելիս հապաղումը և ամբախումը հանգեցնում են լճացման:

23 2020 թվականի իրադարձությունները՝ և՛ համավարակը, և՛ հատկապես Արցախյան երկրորդ պատերազմը, ի ցույց դրեցին այդ իրատարությունը: 20-րդ դարում հայոց մեջ փոփոխություններ իրականացնելու իրատարության մասին արժեքավոր են նաև սխյուռքահայ մտավորական Գրիգոր Պլլոտյանի նկատառումները (տես **Պլլոտեան Գ.**, Ինքնութիւն-Սփիւռք, Եր., 2020):

24 Մասնավորապես՝ պետական քաղաքականության մակարդակում ընդունվել են ռազմավարություններ, օրենսդրական փոփոխություններ, իրականացվել ծրագրեր և այլն:

25 Օրինակ՝ խոսք կարող է լինել այն պարտավորությունների մասին, որոնք այս կամ այն առիթով ստանձնել է ՀՀ-ն, մասնավորապես՝ միանալ զանազան կոնվենցիաների, միջազգային պայմանագրերի, անդամակցել կազմակերպությունների, իրականացնել վարկային ծրագրեր:

4. Հետխորհրդային փորձառության հաստատութենական կողմը

ԽՍՀՄ փլուզումից ու Հայաստանի անկախացումից հետո, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 20-րդ դարի 70-80-ական թթ. ձախական միտքը ճգնաժամ էր ապրում²⁶, իսկ 80-ականների վերջին ԽՍՀՄ հասարակական-պետական բնորդն ու արդիականացման ուղին վերջնականապես ձախողվել էին, միանգամայն բնական էր, որ համակարգային բարեփոխումների գաղափարաբանական առանցք դարձավ ժամանակի տիրապետող մոդելը՝ ազատական ժողովրդավարությունը²⁷: Այսինքն՝ արդիականացման սխալական ուղի համարված ԽՍՀՄ նախագծին փոխարինելու եկավ տնտեսական ու քաղաքական հաստատությունների կառուցման ու գործարկման այլ սկզբունքներ ու մեխանիզմներ ենթադրող մի մոդել, որը որոշ երկրների օրինակով գործնականում ապացուցել էր իր կենսունակությունն ու արդյունավետությունը:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես նաև հրապարակայնորեն շատ է արծարծվել այն հարցը, թե ինչու ազատական ու ժողովրդավարական բարեփոխումներ ձեռնարկած հետխորհրդային շատ հասարակություններ այդպես էլ հաջողության չհասան: Ինչո՞ւ մոտավորապես երեսուն տարի անց որոշ դեպքերում նրանց պատմական հետագծերն ավելի հաճախ արմատականորեն տարբեր են, քան թե նման: Ինչո՞ւ են հատկապես նրանց իրավաքաղաքական (նաև սոցիալ-տնտեսական) հորինվածքները խիստ զգայուն ցնցումների նկատմամբ: Այս համատեքստում ներհասարակական-ներպետական կյանքի մի հորինվածքից մյուսին անցնելիս ի՞նչ է տեղի ունենում նախկինում եղած և դեռևս իներցիայով գործող հաստատությունների հետ. դրանք բոլորն էլ միանգամից հիմնահատակ կործանվո՞ւմ են, և կազմավորվո՞ւմ են նորերը, թե՛ եղածները կարող են նաև բարեփոխվել՝ դրսևորելով ժամանակի մեջ մշտադիմացկունության որակներ:

20-րդ դարի 90-ականներին (որոշ դեպքերում՝ անգամ մինչև այժմ) հետխորհրդային տարածքում ծավալվող բազմապիսի գործընթացները ցույց տվեցին, որ խորհրդային շրջանի հաստատությունները, դրանց համարժեք պրակտիկաները ներհասարակական-ներպետական կյանքից միանգամից չանհետացան: Համակարգային բարեփոխումների իրակա-

26 Այս մասին տե՛ս **Laclau E., Mouffe Ch.**, *Hegemony and Socialist Strategy: Towards a Radical Democratic Politics*, London/New York, 2014, էջ vii-xiv:

27 Տե՛ս **Mouffe Ch.**, *The Democratic Paradox*, London/New York, 2000, էջ 80: ՀՀ օրինակով տե՛ս **Սկրտչյան Ն.**, Սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների գաղափարները հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2021, N 3 (36), էջ 14-27:

նացման նպատակով ձեռնարկված ազատական-ժողովրդավարական հաստատություններ հիմնելու գործընթացը բախվում էր և թերևս դեռ շարունակում է բախվել դրանց համապատասխան պրակտիկաների շարունակական վերարտադրությանը: Այս իրողությունը, ի թիվս այլ բացատրությունների, կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ ազատականությունը՝ իրեն բնորոշ սուղ նորմատիվությամբ, «իր ներսում բնակության տեղ է բացում» անգամ, այսպես կոչված, խորհրդային-ձախական պրակտիկաների համար:

Եթե փորձենք վերացականորեն գծագրել, թե ինչ կարող է տեղի ունենալ հաստատությունների հետ ներհասարակական-ներպետական մի հորինվածքից մյուսին անցնելիս, ապա մոտավորապես կարելի է երկու հնարավոր տարբերակ մտածել: **Առաջին՝** կարող են հիմնադրվել հաստատություններ, որոնք երբևէ գոյություն չեն ունեցել, իսկ հետխորհրդային Հայաստանը սվյալ փորձառությունն ունի²⁸: Ուրեմն խնդիրը դրանց՝ հասարակական-պետական կյանքում արմատավորվելն է, այն, թե որքանով են դրանք սկսում գործել և արդյունավետորեն գործառել, ուրեմն նաև ձևավորել սոցիալական նոր պրակտիկաներ: Բացառված չէ, որ դրանք հետագայում կերաշխավորեն դեպի այլ հաստատություններ անցումը, այսինքն՝ հանդես կզան իբրև միջանկյալ հաստատություններ²⁹:

Երկրորդ տարբերակում կարող են ընդգրկվել այն հաստատությունները, որոնք գոյություն են ունեցել նաև նախկինում, իսկ ներկայումս ձգտում են փոխակերպելու դրանց կազմակերպման սկզբունքներն ու գործարկման մեխանիզմները: Անկասկած, դրանք իրենց հետ կբերեն նոր կառուցակարգեր ու պրակտիկաներ³⁰: Որոշակի պատմական կտրվածքով գործնականում հենց վերջին դեպքում կարող է խոսք լինել հաստատությունների մշտադիմացկունության մասին: Հետխորհրդային հասարակությունների փորձառությունն իմաստավորելիս հարցի այս կողմը միշտ չէ, որ պատշաճ ուշադրության է արժանացել: Տեսական մտորումներից զատ՝ գործնական առումով կարևոր է պատասխանել այն հարցին, թե ինչպես փոխակերպել արդեն իսկ գործող հաստատությունները, որ պահպանեն հաստատութենական հիշողությունը՝ բացառելով անցյալի ու ներկայի

28 Հետխորհրդային երկրների դեպքում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը կարելի է դասել դրանց շարքին:

29 Միջանկյալ հաստատությունների նշանակության մասին տես **Аузан А.**, Промежуточные институты. Почему в России нельзя построить все сразу, Московский центр Карнеги, 27.09.2017, <https://camegie.ru/commentary/73216> (մուտք 10.03.2022):

30 Լավ օրինակ են կուսակցությունները՝ որպես քաղաքական կազմակերպություններ: Եթե խնդրո առարկա հասարակական-պետական կարգը ոչ ժողովրդավարական վարչակարգից ձգտում է անցում կատարելու ժողովրդավարական վարչակարգի, ապա նախկինում գործող կամ նոր հիմնադրված կուսակցությունները կարող են շարունակել իրենց գործունեությունը, բայց այդ դեպքում պիտի ունակ լինեն նաև անցնելու ներքին ժողովրդավարացման գործընթացով: Նմանապես վերադասի և ենթակաների հարաբերությունները կարող են խիստ ուղղահայաց հարաբերություններից վերափոխվել առավել հորիզոնական հարաբերությունների, օրինակ, պետական մարմիններում:

միջև խզումները, և միաժամանակ ունակ լինեն դիմագրավելու նորանոր մարտահրավերների: Անհիմն չի լինի նաև պնդել, որ հաստատութենական հիշողության և հաստատությունների դիմակայունության փոխկապակցությունը բավական վճռորոշ է, և հետխորհրդային հասարակությունների փորձառությունը, այդ թվում՝ հայաստանյանը, դրա լավագույն ապացույցն է: Ընդ որում, ոչ միայն ճիշտ ժամանակին փոփոխվել կարողանալը, այլև հաստատութենական, ինչպես նաև պրակտիկաների մակարդակում խզումներն են անդրադառնում մարտահրավերներին առերեսվելու կարողության՝ հասարակական-պետական կարգի դիմակայունության վրա:

Այսպիսով՝ անցյալի ու ներկայի միջև խզումներն արդեն իսկ լրջորեն հարցականի տակ են դնում հաստատությունների մշտադիմացկունության կարողությունը և էապես թուլացնում հասարակական-պետական կարգի դիմակայունությունը: Ուշագրավ է, որ սոցիալական առումով ժամանակային բնույթ ունեցող անցյալի ու ներկայի միջև խզումները կարող են ուղեկցվել նաև տարածական խզումներով³¹ և թափանցել մարդկային կենսագործունեության ամենատարբեր ոլորտներ³²:

Եզրակացության փոխարեն

Հայտնի փաստ է, որ պատմության շարադրումը պիտի ունենա իր, այսպես կոչված, «խարիսխները»: Դրանք որոշակիորեն կառուցակարգում ու իմաստավորում են պատմական անցքերը և օժտում դրանք իրերի ընթացքը փոխելու հատկությամբ: Հայոց պատմության շարադրման ու իմաստավորման տեսանկյունից գլխավոր խարիսխներից մեկը, եթե ոչ՝ ամենագլխավորը, պետության ու պետականության գոյությունը, դրանց կորստի ու վերականգնման դեպքերն են, ինչը կարելի է համարել նաև արդիության արևմտյան նախագծի ազդեցությամբ հայ պատմագրության

31 Տարածական խզումներ ասելով պիտի նկատի ունենալ ներփակ համայնքների առկայությունն ու դրանց միջև պատշաճ հաղորդակցության բացակայությունը: 20-րդ դարասկզբին այդ խզվածությունը լավագույնս արտահայտվել է արևելահայ-արևմտահայ բաժանմամբ: Հետաքրքրական կերպով այդ մասին են վկայում նաև Հակոբ Օշականի գործերը արևմտահայ իրականության մասին (տե՛ս **Պարանոն Ն.**, Կայսրություն, հպատակություն, եւ «հայթորք հարցը», Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, 24.01.2022, <https://www.youtube.com/watch?v=AjGmPdU8IW4> (մուտք՝ 10.03.2022)): Խզումների պատճառը գլխավորապես պետության ու պետականության կորուստն ու ազգաբնակչության միգրացիոն հոսքերն են: Ուրեմն ոչ միայն լեզվական/կայսերական միջավայրերն են հարուցել խզումներ: Բացի այդ՝ հայոց մեջ որոշակիորեն խզումներ առաջ են եկել նաև սոցիալական խավերի՝ մայրաքաղաքներում կամ տնտեսական-մշակութային կենտրոններում բնակվող մեծահարուստների, մտավորականների և գյուղական համայնքում բնակվող գեղջուկների միջև: Այս մասին տե՛ս **Suny R. G.**, Looking Toward Ararat: Armenia in Modern History, Bloomington/Indianapolis, 1993, էջ 5-18:

32 Այս մասին ուշագրավ հաղորդում է տալիս Հայաստանում սննդի սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատող երիտասարդների վերաբերյալ վերջին ուսումնասիրություններից մեկը, որի համաձայն՝ այդ ոլորտում աշխատող երիտասարդների կենսափորձում կարևոր գործոն է դրվագայնությունը՝ անցյալի, ներկայի և ապագայի խզվածությունը: Ընդ որում, այս համատեքստում առաջնայնությունը ծեռք է բերում ներկան իր ամենօրյա, կարճաժամկետ խնդիրներով (տե՛ս **Ղալամդարյան Ա.**, Սուպերմարկետում և հանրային սննդի կետում աշխատող երիտասարդի ապագայի պլանավորումը, Բուն ԹՎ, <http://boon.am/%D5%BD> սուպերմարկետում-և-հանրային-սննդի-կետ/ (մուտք՝ 10.03.2022)):

մեջ ազգային պետության առաջնահերթման հետևանք: Ուստի երբ այդ իրողությունները լծորդում ենք լայն իմաստով սոցիալական հաստատություններին, դրանց մշտադիմացկունության հատկանիշին, իսկ պետության ու պետականության հենքը հենց հաստատություններն են, ապա անխուսափելիորեն երևակվում են հայոց մեջ հաստատությունների մշտադիմացկունության պակասի, եթե ոչ՝ բացակայության³³, սոցիալական առումով տարածական ու ժամանակային խզումների խնդիրները: Եվ այդ իրողություններն են նաև բացատրում հայոց մեջ սոցիալական ցնցումների հանդեպ բարձր զգայունությունը և ամենատարբեր, հատկապես ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմագրավելու կարողությունների սահմանափակությունը: Եվ ուրեմն այս ծիրում պիտի վերաքննել հայկականության և հայկական պետության ու պետականության ճակատագրի հարցերը, ինչը թույլ կտա լուծումներ գտնել՝ դուրս գալու դրանց երկարատև փլուզումների և կարճատև վերականգնումների կրկնվող շրջապտույտից կամ, գուցե ավելի ձիշտ է ասել, անփոփոխ ակոսից:

Նաիրա Ժ. Մկրտչյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է անցումային հասարակություններին վերաբերող հիմնախնդիրներ, սոցիալական և հումանիտար գիտությունների իմացաբանական ու մեթոդաբանական հարցեր, արդարության ժամանակակից և հետկառուցապաշտական մի շարք քաղաքական տեսություններ: Հեղինակ է ավելի քան 20 գիտական հրապարակումների, որոնցից երկուսը ուսումնական ձեռնարկներ են:

Էլ. հասցե՝ naira.mkrtyan@ysu.am

33 Պետության ու պետականության կորստի ու վերականգնման շրջափուլերում մինչ այժմ երկու հաստատություն է կարողացել վերապրել Հայ առաքելական եկեղեցին և ընտանիքը: Ի միջի այլոց, երկուսն էլ իրենց բնույթով ավելի շուտ նախարդիական հաստատություններ են, և նորահայտ մարտահրավերներին դեմ հանդիման դրանք նույնպես դեռ պիտի կարողանան ի հայտ բերել իրենց կենսունակությունը:

Summary

ON THE ISSUE OF RECONSTRUCTION OF LIFE WITHIN POLITY

And the durability of institutions

Naira Zh. Mkrtchyan

Candidate of Sciences in Philosophy

Key words – life within polity, reconstruction, change, institutions, durability, social order, ruptures.

The events, taken place in Armenia and around it recently, have made acute the issue of reconstruction of life within polity as it faces various challenges. The changes within polity are viewed as the only true way of resolution of the situation emerged. And first of all, it deals with the institutions, their durability and design of social order in general. The need and necessity of reconstruction of polity via changes are evidences of an actuality of crisis in it. In effect, throughout centuries Armenia experienced different crises and reconstructions of life in society (in community). The last one of them was caused by the independence of Armenia and collapse of the USSR. As a result, liberal democracy became the ideological frame for the initiated reconstruction in polity. In the background of these institutional changes, the ruptures between past and present have huge impact not only on durability of institutions but also on resilience of social order.

Taking into consideration the importance of durability of institutions, these (temporal) ruptures between past and present completed by spatial ones enable to grasp the recurrent long-term losses and short-term restorations of Armenian state and statehood in a new light and find solutions for getting out of this unchangeable rut.

О РЕКОНСТРУКЦИИ НАШЕЙ ВНУТРИГОСУДАРСТВЕННОЙ ЖИЗНИ

И проблеме долговечности институтов

Наира Ж. Мкртчян
Кандидат философ. наук

Ключевые слова – внутригосударственная жизнь, реконструкция, изменение, институты, долговечность, общественный порядок, разрывы.

События, произошедшие в Армении и вокруг нее за последнее время, обострили проблему реконструкции внутриобщественной и внутри государственной жизни. В результате она столкнулась с разными вызовами. Изменения в государстве рассматриваются как единственно правильный выход из сложившейся ситуации. И в первую очередь, они касаются государственных институтов, их долговечности и дизайна общественного порядка в целом. Нужда и необходимость его реконструкции свидетельствуют об актуальности кризиса в нем.

В сущности на протяжении веков Армения не раз проходила через кризисы и приобрела важный опыт реконструкции внутриобщественной (внутриобщинной) жизни. Последний из них был обусловлен независимостью Армении и коллапсом СССР. Как результат, либеральная демократия стала идеологической рамкой для инициированной реконструкции общественной и государственной жизни. В обстановке этих институциональных изменений разрывы между прошлым и настоящим имеют огромное влияние не только на долговечность институтов, но и на устойчивость общественного порядка.

Принимая во внимание важность долговечности институтов, эти темпоральные разрывы между прошлым и настоящим, пополнившиеся пространственными разрывами, дают возможность в новом свете понять причины повторяющихся долгосрочных коллапсов и краткосрочных восстановлений армянского государства и государственности и найти решения для выхода из этой неизменной колеи.

REFERENCES

1. “Ankakhut‘yunë yev azatakan barep‘okhumnerë”, Mas 1, khmb. **Liza Chagharyan, Seda Mesropyan**, Yer., 2020 (**In Armenian**).
2. “Ankakhut‘yunë yev azatakan barep‘okhumnerë”, Mas 2, khmb. **Liza Chagharyan, Seda Mesropyan**, Yer., 2021 (**In Armenian**).
3. **Arevshatyan R.**, Verënt‘erts‘elov yerkepghkvats patmut‘yunë..., **Ter-Minasyan T.**, Chartarapetut‘yunë Gulagum. Norlisk. khorhrdayin beverayin k‘aghak‘i kovkasyan patmut‘yun, Yer., 2019 (**In Armenian**).
4. **Aristotel‘**, Politika, Sochinenija v 4 tomax, t. 4, M., 1984 (**In Russian**).
5. **Auzan A.**, Promezhutochnyje instituty. Pochemu v Rossii nel‘zja postroit‘ vse srazu, Moskovskiy centr Karnegi, 27.09.2017, <https://carnegie.ru/commentary/73216> (**In Russian**).
6. **Ghalamdaryan A.**, Supermarketum yev hanrayin snndi ketum ashkhatogh yeritasardi apagayi planavorumë, Bun T‘V, <http://boon.am/%D5%BDնւպէրբարկէտում-ու-հանրապիւ-սննդի-կէտ/> (**In Armenian**).
7. **Gpranean N.**, Kaysrut‘iwn, hpatakut‘iwn yev “hay-t‘urk‘ harts‘ë”, Ashot Hovhannisyan anvan humanitar hetazotut‘yunneri institut, 24.01.2022, <https://www.youtube.com/watch?v=AjGmPdU8IW4> (**In Armenian**).
8. **Kranean A. vrd.**, Bařgirk‘ hayerën lezui, Pëyrut‘, 1998 (**In Armenian**).
9. **Malkhaseants‘ St.**, Hayerën bats‘atrankan bararan, hat. 1, Yer., 1944 (**In Armenian**).
10. **Mkrтч‘yan N.**, Sots‘ialakan ardarut‘yan yev mardu himnarar iravunk‘neri gaghap‘amerë hayastanyan hanrayin-k‘aghak‘akan khosuyt‘um, “Banber Yerevani hamalsarani. P‘ilisop‘ayut‘yun, Hogebanut‘yun”, Yer., 2021, N 3 (36), ëj 14-27 (**In Armenian**).
11. **Parmenid**, Elejskaja shkola, “Antologija mirovoj filosofii”, t. 1, ch. 1, M., 1969, ss. 293-296 (**In Russian**).
12. **Pëltean G.**, Ink‘nut‘iwn-Sp‘iwřk‘, Yer., 2020 (**In Armenian**).
13. **Platon**, Gosudarstvo, Izbrannoje, M., 2006, ss. 27-384 (**In Russian**).
14. **Platon**, Timej, Izbrannyje dialogi, M., 2002, ss. 161-248 (**In Russian**).
15. **Zëk‘iean P. L.**, Haykakan ughin depi ardiakanut‘yun: Hay ink‘nut‘yunn avanduyt‘i yev noruyt‘i, hatuki yev ëndhanrakani mijev, <http://arjps.org/cover/arm/The%20Armenian%-20Way%20to%20Modernity.pdf> (**In Armenian**).